



«Հայաստանի Հանրապետության
և անկախությունը ցուցաբերող
Մուտք № 10-161
01 03 2009
3 Փեղք/Էջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

25 02 2010 թ.
Բ.ԵՐԵՎԱՆ

N 98-Պ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԳԻՈՂԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՉԱՓԸ ԵՎ
ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆԱԽԱՐԱՐԻ 28.12.2009 Թ.
N 821-Ա ՀՐԱՄԱՆԸ ՌԻԺԸ ԿՈՐՑՐԱԾ ԾԱՆԱԶԵԼՈՒ ՍԱՍԻՆ

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի և 20-րդ հոդվածի, ղեկավարվելով
«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով.

1. Հաստատել «ԵՐԵՎԱՆԻ ՌԱԳԻՈՑԱՆՑ» փակ բաժնետիրական ընկերության
կողմից տեղաբաշխված հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի փոխարկման
արդյունքները «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԳԻՈՂԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ» փակ
բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի, այն է՝ ընկերության կողմից տեղաբաշխված
թվով 1 հատ 500,000 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական ոչ
փաստաթղթային բաժնետոմսը փոխարկվում է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ
ՌԱԳԻՈՂԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ» փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկված թվով 1
հատ 500,000 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական
բաժնետոմսի:

2. Հաստատել միացման ճանապարհով վերակազմակերպված «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԳԻՈՂԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ» փակ բաժնետիրական ընկերության
կանոնադրական կապիտալի մեծությունը՝ 952,500,000 (իննը հարյուր հիսուներկու միլիոն հինգ
հարյուր հազար) դրամ՝ 500,000 դրամ անվանական արժեքով 1905 հատ հասարակ
(սովորական) անվանական բաժնետոմս:

3. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 14.11.2003թ. թիվ 361-Ա հրամանով
հաստատված «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԳԻՈՂԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ» ՓԲԸ
կանոնադրության մեջ կատարել հետևյալ լրացումը՝ Կանոնադրության 1-ին կետի վերջում
ավելացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Ընկերությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թ. մայիսի 21-ի
«ԵՐԵՎԱՆԻ ՌԱԳԻՈՑԱՆՑ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ
ՌԱԳԻՈՂԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» քիվ 628-Ն որոշման համաձայն վերակազմակերպվել է՝ «ԵՐԵՎԱՆԻ ՌԱԴԻՈՑԱՆՑ» (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 22.10.2008 թ., գրանցման քիվ՝ 222.120.01023, վկայական՝ 03 Ա 081957, գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի փ. 18ա) փակ բաժնետիրական ընկերությունը նրան միացման ճանապարհով և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:»:

4. Հաստատել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԴԻՈՎԱՂՈՐԳԻՉ ՑԱՆՑ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության՝ վերակազմակերպմամբ պայմանավորված փոփոխությունը:

5. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 28.12.2009 թ. N 821-Ա հրամանը:

ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐԳԱՅԱՆ

25. 02 2010թ.
ք. Երևան



Հ Ա Ս Ս Ա Ս Վ Ա Շ Է

Հայաստանի Հանրապետության
տրանսպորտի և կապի նախարարի
25.02.2010 թ. թիվ 98 -Ա հրամանով

ՀՀ տրանսպորտի և կապի նախարար



Գ Ր Ա Ն Ց Վ Ա Շ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՅ 22.09.1994 թ.
գրանցման թիվ 273.140.00184
վկայական 01 Ա 002632

վերականգնվող մեքենայի գրանց. օրը՝ 04.05.1998 թ.
08.12.2003 թ. գրանցված կանոնադրության
թիվ 005-3 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
կենտրոնական մարմնի կողմից
01.03.2010 թ.



**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ
ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ»
փակ բաժնետիրական ընկերության
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
(փոփոխություն)**

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ» փակ
բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

1. Կանոնադրության 1.-ին կետից հետո ավելացնել հետևյալ բովանդակությամբ նոր
պարբերություն.

«Ընկերությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թ. մայիսի 21-ի
«ԵՐԵՎԱՆԻ ՌԱԴԻՈՑԱՆՑ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԻՉ
ՑԱՆՑ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ
628-Ն որոշման համաձայն վերականգնվել է՝ «ԵՐԵՎԱՆԻ ՌԱԴԻՈՑԱՆՑ» (գրանցված է
Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական
մարմնի կողմից 22.10.2008 թ., գրանցման թիվ՝ 222.120.01023, վկայական՝ 03 Ա 081957, գտնվելու վայրը՝
ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի փ. 18ա) փակ բաժնետիրական ընկերությունը նրան միացման ճանապարհով և
հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:»:

2. Ընկերության կանոնադրության 24. կետը կարգալ հետևյալ խմբագրությամբ.

«24. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 952,500,000 (իննը հարյուր
հիսուներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ, որը կազմում է 1905 հասարակ (սովորական)
անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 500,000 դրամ:
Բոլոր 1905 բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են
Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:
Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ են:»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ
ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ» փակ բաժնետիրական ընկերության 08.12.2003 թ. գրանցված
կանոնադրության բաղկացուցիչ մասը: